# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ


<< >> __________ 2014թ.

N: ____________________

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77


## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՎԵՐՋԻՆ ԴԱՍԻ ԱՌԹԻՎ

Սիրելի շրջանավարտներ.

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ այս գեղեցիկ և բոլորիդ համար անմոռաց տոնական օրվա՝ Վերջին դասի կապակցությամբ: Այսօր դուք հրաժեշտ եք տալիս Ձեզ համար ջերմ ու հարազատ դարձած կրթօջախներին, հարգելի և սիրելի ուսուցիչներին, ընկերներին:

Այս ավանդաբար հնչող վերջին զանգն ազդարարում է Ձեր մուտքը դեպի մեծ կյանք, նոր աշխարհ, որտեղ Ձեզ սպասում են բազում անակնկալներ, ինչու չէ նաև դժվարություններ ինքնադրսևորման և ինքնահաստատման ուղին անցնելու համար:

Շնորհավորելով Ձեզ, Ձեր ծնողներին և ուսուցիչներին այս հիշարժան օրվա առթիվ՝ մաղթում եմ ամենայն բարիք, քաջառողջություն, երջանիկ ապագա, անսահման հաջողություններ Ձեր բոլոր նախաձեռնություններում և թող որ Ձեր բոլոր երազանքներն ու նպատակներն իրականանան:

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ